ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
Սեպտեմբերի 10-12-ը Իտալիա (Ֆլորենցիա) գործուղման

ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ

Հայկ Հարությունյան

ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ

Ֆլորենցիա /Իտալիա/, 2017թ. սեպտեմբերի 10-12-ը

ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ

Գլոբալ երկրաջերմային ալյանս /Global Geothermal Alliance (GGA)/

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Մասնակցություն «Միացյալ ուժերով երկրաջերմային էներգիայի խթանումը դեպի կայուն էներգետիկ ապագա» թեմայով համաժողովին:

ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ

Համաժողովի հիմնական նպատակն է քննարկել այն անհրաժեշտ գործողությունները, որոնք կապահովեն երկրաջերմային էներգիայի կայուն զարգացումը, մասնավորապես՝ նպաստել կողմերի միջև փորձի փոխանակմանը, տրամադրել տեխնիկական օգնություն, խորհրդատվություն և խթանել կարողությունների զարգացումը:

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ

Համաժողովի ընթացքում քննարկվեցին մի շարք հարցեր երկրաջերմային էներգիայի կայուն զարգացման վերաբերյալ, որտեղ օրակարգային նախարարական կլոր սեղանի ժամանակ ներկայացրեցի Հայաստանի էներգետիկ ոլորտը, մասնավորապես Երկրաջերմային հետախուզական հորատման ներդրումային ծրագիրը, ծրագրի արդյունքները, որի շնորհիվ հնարավոր կլինի ներդրումներ ներգրավել դեպի Հայաստան:

Հանդիպումներ տեղի ունեցան մի շարք կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, մասնավորապես «ԷՆԵԼ» ընկերության ներկայացուցիչ Կառլո Պիգնոլոնիի հետ, որի արդյունքում համագործակցության պայմանավորվածություն ձեռք բերվեց «ԷՆԵԼ» ընկերության ներկայացուցիչների հետ և հետաքրքրվածություն այցելելու Հայաստան՝ տեղում ծանոթանալու Երկրաջերմային հետախուզական հորատման ծրագրին:

Մեկ այլ հանդիպում տեղի ունեցավ Օլաֆուր Գրիմսոնի հետ, ով նախկինում եղել է Իսլանդիայի նախագահը, այժմ «Արկտիկ Սայքլ» ընկերության նախագահն է: Հանդիպման արդյունքում հայկական կողմը հրավիրեց Օլաֆուր Գրիմսոնին Հայաստան իր բազմամյա փորձով կիսվելու և աջակցելու Հայաստանի Հանրապետությանը վերականգնվող էներգետիկայի ոլորտը զարգացնելու նպատակով:

Հայկական կողմը հանդիպում ունեցավ Միջազգային Երկրաջերմային Ասոցիացիայի (IGA) գործադիր տնօրեն Մերիթ Բրումերի հետ, որի արդյունքում Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամը կհամագործակցի Ասոցացիայի հետ:

Միջազգային վերականգնվող էներգիայի գործակալության (ԻՌԵՆԱ) տնօրեն Ադնան Ամինի հետ հանդիպման ընթացքում քննարկվեցին էներգետիկ ոլորտի վերջին զարգացումները, ներկայացվեցին Հայաստանի էներգետիկ ոլորտի ծրագրերը: Արդյունքում Հայաստանի Հանրապետությունը անդամակցության գործընթաց կսկսի Գլոբալ Երկրաջերմային Ալյանսի հետ (GGA), ինչպես նաև պայմանավորվածության համաձայն մոտակա ժամանակներում քայլեր կձեռնարկի Ա. Ամինի այցը Հայաստան կազմակերպելու համար:

ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Համաժողովի ավարտին ստորագրվել է «Աշխատել միասին նպաստելով Երկրաջերմային էներգետիկայի կայուն ապագայի կերտման համար» խորագրով Ֆլորենցիայի հուշագիրը:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ՀԱՅԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

14.09.2017թ.